ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
KAREN MNATSAKANYAN

«ԽԱՉԵԼՈՒԹՅԱՆ» ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչելությունը, որպես մարդու կողմից հորինված մահապատժի ամենադաժան միջոց, ունի վաղեմի պատմություն: Խաչի վրա հանցագործներին խաչում էին դեռևս բաբելոնացիները, պարսիկները, փյունիկացիները: Հռոմի քաղաքացիներին նման մահապատժի էին ենթարկում միայն հատուկ դեպքերում: Իսկ հույներն ու եգիպտացիները, ինչպես և հայերը, բացառում էին մահապատժի այդ միջոցը:

Մահվան դատապարտվածին պարաններով կապում կամ մեխերով գամում էին ուղղահայաց կանգնեցված սյունին: Հռոմեացիների մոտ գոյություն ուներ խաչի երեք տեսակ *crus comissa* կամ սբ. Անտոնիոյսի խաչ, որն ուներ «Т» տառի ֆորմա, *crus immissa* կամ լատինական խաչ «+» նշանի տեսքով, *crus decussata* կամ սբ. Անդրեասի խաչ նման «Х» տառին:

Մինչև խաչելը մահապարտյալին ենթարկում էին մտրակի հարվածների, ընդորում, որպեսզի զոհը չմահանա մինչև խաչվելը, հարվածները պետք է չգերազանցեին քառասունը: Համաձայն այդ օրենքների, մահապարտյալը պետք է խաչն իր ուսերի վրա տաներ մինչև հրապարակ:

Քրիստոսի տանջանքներն ու խաչելությունը նկարագրված է բոլոր չորս ավետարանիչների մոտ: <<Եվ վերցրին նրանք ու տարան Հիսուսին: Նա կրում էր Իր խաչը, և դուրս եկավ այն տեղը, որ կոչվում է Գողգոթա>> (Հովհ. 19: 16-18):

Քրիստոնեության առաջին տարիներին խաչը համարվում էր դաժանության, բարբարոսության խորհրդանիշ: Չնայած նրան, որ Պետրոս առաքյալն խաչը դարձրեց մարդկության փրկության խորհրդանիշ, դրանով իսկ քրիստոնեության վերջնական հաղթանակը, այնուամենայնիվ դեռ երկար ժամանակ խաչը քրիստոնեաների ընկալման մեջ մնում էր տառապանքների ու հրեշավոր մահվան խորհրդանիշ: Նրանց համար դժվար էր ընդունել խաչը որպես փրկության և նոր կյանքի սկիզբը խորհրդանշող նշան, քանզի առօրյա իրականության մեջ այն տանջանքների, մահվան «գործիք» էր: Դրա մասին են վկայում նաև հռոմեական կատակոմբների որմնանկարները, որտեղ որպես Հիսուսի խորհրդանիշ պատկերված են հովիվը, զոհաբերվող գառնուկը, ձուկը, այլ ոչ խաչը:

Համաձայն գրավոր աղբյուրների, խաչելության պատկերները ի հայտ են գալիս սկսած V դարից: Քրիստոնեության ընդունման առաջին դարերում Փրկչի խաչելությունը նկարագրված էր հպանցիկ, ակնարկային, հիմնականում Հին Կտակարանի կերպարների օգնությամբ: Նման նախօրինակներից էր Իսահակի և Աբրահամի պատմությունը, քանի որ դեռևս Պողոս առաքյալը նշում էր, որ Աբրահամի զոհաբերությունը հաստատում է մեռածների հարություն առնելու հնարավորության փաստը (Հովհ. 11: 17-19): Գրավոր սկզբնաղբյուրներում խաչելության խորհրդանիշներ են Դանիելը առյուծների հորում, երբ նա պատկերված է ձեռքերը խաչի պես ուղված, Հովնանը, որն աղթում էր կետի փորում, Մովսեսը, որը փրկում էր իր ժողովրդին: Վաղ քրիստոնեական արվեստում, խաչելությունը փոխարինվում էր նաև ողղակի խաչի պատկերումով:

Խաչը, որպես Հիսուսի խորհրդանիշ, տարածում է գտնում միայն 5-6դդ. Կոստանդին Մեծի կողմից խաչելությունը որպես մահապատժի միջոց, արգելումից հարյուր տարի անց: Քրիստոնեական պատկերագրության մեջ այդ ժամանակ ի հայտ են գալիս այնպիսի մոտիվներ, ինչպիսիք են «Փրկչի բարեբարությունը», նրա հրաշքներն ու դասերը: Հիսուսի տանջանքները, հալածանքները պատկերող տեսարանները տարածում են գտնում միայն ավելի ուշ 5-րդ դ. հուշարձաններում:

Խաչված Քրիստոսի կուռքը ծնվել է 5-րդ դարում, Մերձավոր Արևելքի երկրներում: Այստեղ Հիսուսին պատկերում էին մերկ, միայն կոնքերին կապված կտորով:

Արևմուտքում այս կուռքը տարածվեց Սիրիայից Իտալիա տեղափոխված վաճառականների ու ստրուկների միջոցով, միայն այն տարբերությամբ, որ նրանց մոտ Փրկչին պատկերում էին հագուստով, մարմինն ու դեմքը հանգիստ, քանի որ Աստծո Որդին չէր կարող ցավ զգալ ու տանջվեր, ասես հանարակ մահկանացու: Միայն 10-րդ դարի կեսերին, երբ Արևմուտքի և Բյուզանդիայի միջև ամրացան առևտրական և մշակութային կապերը, խաչելության պատկերագրության մեջ տարածվեց Հիսուսի որպես տառապողի, հանուն մարդկության փրկության բազում տանջանքների ենթարկված ավետարանական մեղսաքավի պատկերագրական տիպը: Այդ մոտեցումը գտավ իր խոր և վառ արտահայտումը միջնադարյան արվեստի բոլոր ճյուղերում՝ մանրանկարչության, քանդակագործության և մոնումենտալ գեղանկարչության մեջ:

Եկեղեցին հետապնդում էր մեկ նպատակ խաչելության տեսարանը պատկերել այնպես, որ այն ողբից վերածվի հույսի ու հաղթանակի,

խորհրդանշելով մարդկության պատմության նոր դարաշրջանի սկիզբը: Խաչի վրա այլևս չէին պատկերում չարչարանքների ենթարկված Հիսուսին, այլ վեր էր հառնում Աստծո Որդին, աշխարհի Փրկիչը:

Խաչված Հիսուսի կուռքը Հայաստանում կապված էր քրիստոնեության տարածման հետ և ընկալվում էր երկակի որպես Արևմուտքի Բյուզանդիայի (Գրիգոր Լուսավորչի ճյուղ) և Արևելքի Սիրիայի ազդեցություն: Խաչված Հիսուսի պատկերը ի հայտ է գալիս արդեն 4-րդ դարի որմնաքանդակներում (Արուճ, Պտղնի):[1]

Հասուն միջնադարում «Խաչելության», պատկերազրական տիպը ներկայանում է «Խաչից իջեցում« և «Թաղում» տեսարանների զուգակցումով: Հայտնի է, որ այս երկու թեմաները հաճախ էին ի մի բերվում 9-11դդ. արևմտյան ձեռագրերում, հաճախ ընդգրկելով նաև «Մարմինը կրելու» դրվագը: Պատկերագրական առումով հորինվածքային շարադրանքը սովորաբար ծավալվում է աջից ձախ, առանձին դեպքերում պատկերները տեղավորված են լինում իրար վրա:

Խաչի առաջին պատկերները հանդիպում ենք 5-րդ դարի հռոմեական սարկոֆագների վրա:[2] Մանրանկարչության մեջ խաչը հանդիպում է արդեն 586թ. Ռաբուլայի ավետարանում: Հիսուսն այստեղ պատկերված է սևահեր, կարճ մորուսով, լայն բացված աչքերով, հագին ունի դեղնավուն տունիկա ոսկեզօծ ծայրերով: Մոնցայի տափաշշերում Հիսուսը պատկերված է գլուխը առաջ կախած վիճակում, նրա ձախ և աջ կողմերում տեղավորված են հրեշտակները, նրանց վերևում արևի և լուսնի սիմվոլները, իսկ խաչի վերևում գամված տախտակին գրված է «IRXN»: Համաձայն Շտոկբաուերի հրեշտակները, երկար տունիկան, արևի ու լուսնի, եկեղեցու և սինագոգայի խորհրդանիշները ունեն արևելա-սիրիա-հայկական ծագում:[3]

Վերոհիշյալ բոլոր հուշարձանները դասվում են քառակողմանի խաչի տիպին /նկ. ա/: Հազվադեպ են հանդիպում եռակողմ խաչերը[4] /նկ.բ/:

Առավել տարածված են յոթ կամ ութ կողմանի խաչի տիպերը /նկ.գ-զ/. որոնք ունեն ձեռքերի և ոտքերի հենակ- տախտակներ:

ա/ բ/ գ/ դ/

ե/

գ/

Գլխի համար նախատեսված վերևի տախտակին գրվում էր «ICXC»: Գրության այս տիպը տարածված է եղել մինչև 16-րդ դարը: Այստեղ բացառություն են կազմում հայկական, մասնավորապես Վասպուրականի դպրոցի մանրանկարները, որտեղ տառերը գրվում են տախտակի կողային մասերում երկուական:

Զուգահեռ, բյուզանդական հուշարձաններում հանդիպում է «IXRN» գրությունը: Ուշ միջնադարում և Վերածննդի դարաշրջաններում այն դառնում է ավանդական:

Ութանկյուն խաչի վաղագույն նախօրինակները կան Մոնցայի սրվակներում: Լրացուցիչ փայտերը գլխի և ոտքերի համար ի սկզբանե ծառայում էին Քրիստոսի տանջանքների պատկերման ազդեցությունը դիտողի վրա ուժեղացնելու համար, առավել սրելու տեսարանի էմոցիոնալ կողմը: Խաչի այս ձևը զարգացել է քառակող տարբերակի հիման վրա 3-րդ դարում[5]: Հաճախ այս պատկերներում հանդիպում ենք փրկչի խորհրդանիշը լուսապսակով գառան պատկերը, որի ոտքի մոտ խաչ է[6]: Խաչի տակ տեղավորված գառան կերպարներ կան նաև Մոնցայի տափաշշերում, Ռավեննայի Սբ Սարգիս եկեղեցում: Սակայն արդեն Նարբոնի Գենեզիսի եկեղեցում ի հայտ է գալիս խաչված մարդը: Նմանատիպ է 5-րդ դ. բրիտանական սրվակի հորինվածքը՝ Քրիստոս, Մարիամ, Հավհանես և Հուդա: Հայկական հուշարձաններում այս տեսարանում Հուդայի կերպարը գրեթե չի հանդիպում:

«Խաչելության» և «Խաչից իջեցման» համադրված պատկերներում հանդիպող ութաթև խաչերը, պատկերում առկա հրեշտակները (մեկական, խաչաթևերից աջ և ձախ), լուսնի և արևի (պատկերված են խաչից վեր), եկեղեցու և սինագոգի խորհրդանիշները (պատկերի աջ և ձախ կողմերում) ունեն արևելյան, ասորա-հայկական ծագում: Դրանք իրենցից ներկայացնում է ամփոփ, հավաքական մի էջ, ուր ի մի են բերված երեք »Խաչից իջեցման«, «Դիակը Պյուղատոսից խնդրելու» և «Թաղման» թեմաները:

Էջի աջ կողմում սովորաբար պատկերվում է «Խաչից իջեցումը»: Խաչի վերին մասում, աջ և ձախ ուղղությամբ տեղավորվում են մեկական հրեշտակներ: Հարկ է նշել, որ այստեղ հանդիպում է երկու ավանդական տարբե-

բակ՝ արևելյան՝ արևի և լուսնի խորհրդանիշներ և եվրոպական՝ խաչի վերևում երկու հրեշտակ: Նրանց հագուստը կապույտ է, թևերը կարմիր: Գլխներին պատկերված են այլաբանական թագեր: Քիչ ներքև. փրկչին խաչից իջեցնում է Հովսեփ Արիմաթացին, որը հագին ունի ծիրանագույն և կանաչ տոգա, իսկ վրայից ոսկեգույն թիկնոց: Նկարի ձախ կողմում տեղավորվում է Աստվածամայրը, աջում՝ Հովհաննեսը:

Այսպիսով, «Խաչելության» պատկերագրական տիպերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի՝ եվրոպական, բյուզանդական և արևելյան՝ հայկական: Կարող ենք ենթադրել, որ թե հայկական և թե բյուզանդական տիպերը կրում էին վաղ քրիստոնեական մի ընդհանուր սկզբնաղբյուրի մշակութային ազդեցություն, որի մասին վկայում են մի շարք պատկերագրական ընդհանրություններ: Հանդիսանալով միևնույն հոսանքի տարբեր ճյուղեր, նրանք ձևավորվել և զարգացել են բացարձակ տարբեր ուղղություններով, տարբեր քաղաքական և սոցիալական պայմաններում, հետևաբար տարբեր հոգեբանությամբ, գույնի զգացողությամբ ու այլաբանությամբ:

---

[1]Փրկության գաղափարի հետ է կապված նաև հայկական արվեստին խիստ բնորոշ մեմորիալ բանդակի տիպը՝ խաչքարը (խաչ-քար)

[2]Որոշ դեպքերում գառան գլխին պատկերված է խաչ, իսկ 9-րդ դարի արծաթե լապտերի վրայի պատկերում նրա կուրծքն ամբողջովին զարդարված է խաչերով: Գառան պատկերը հանդիպում է նաև 6-րդ դարի Կոզմա և Դամիանոսի եկեղեցու խճանկարներում, Ռավեննայի Սան-Ապոլինարե ին Կլասսե եկեղեցում, 7-րդ դարի հռոմեական Ստեֆանո Ռոտոնդոյում: Զարմանալի հետաքրքիր մեկնաբանում ենք գտնում Մոնցայի սրվակների վրա, որ կոմպոզիցիայի կենտրոնում պատկերված է խաչը, խաչի գերանների հատվող մասում գաղջ, նրա երկու կողմերում՝ ավազակները, ներքևում՝ Ադամն ու Եվան :

[3] Studies in Byzantine Iconography (by direct. of Ch.Walter), London, Univ. Press, 1977, 412p.

[4] միայն մի քանի ձեռագրեր Սաբինայից

[5] Լյուցինայի գետնափորները, 5-րդ դ. սի շարք սարկոֆագները

[6] 6-րդ դ. Կոզմա և Դամիանոսի եկեղեցու խճանկարները, Ռավեննայի Սան Ապոլինարե ին Կլասսե, Հռոմեական 7-րդ դ. Սան Ստեֆանո եկեղեցիների ձևավորումները

Օգտագործված գրականության ցանկ

1. *Антонова В. И., Мнёва Н. Е.* Каталог древнерусской живописи XIV — начала XVII веков: Опыт историко-художественной классификации. М., 1963.

2. *Кондаков Н. П.* Лицевой иконописный подлинник, т. I. Иконография Господа Бога и Спаса нашего Иисуса Христа. СПб., 1905.

3. *Лифшиц Л. И.* Распятие // Государственная Третьяковская Галерея. Древнерусское искусство X – начала XV века. Каталог собрания. Том 1. Москва, 1995.

4. *Покровский Н. В.* Евангелие в памятниках иконографии преимущественно византийских и русских. М., 2001.

5. Baltrusaitus J. – La geometrie et les monsters.// "Gazette des Beaux-Arts", Paris, 1928.

6. Baltrusaitis J. – La stylistique ornementale dans la sculpture roman. Paris, E.Leroux, 1931, 404 p.
7. Damisch H. – Iconographie et semiologie.// "La sociologie de l'art et sa vocation interdisciplinaire". Paris, 1976, pp.29-39.
8. Deschamps P. et M. Thibout – La peinture murale en France. Le haut Moyen Age et l'epoque romane. Paris, Pantheon, 1951, 307
9. Encyclopedia of World art. New-York, Toronto, London, Roma, 1978, v. I I
10. Focillon H. – L'art des sculpteurs romans: Recherches sur l'histoire des formes. 3m ed. Paris: Presses univ. de ls France, 1982, 282 p.
11. Kunstle K. – Iconographie der christlichen Kunst. 2Bds. Freiburg im Breisgau, 1928.
12. Lexikon der christlichen Ikonographie. Wien, 1968, Bd.1, pp.146-63.
13. Male E. – L'art religieux du XIIe au XVIIIe sie`cles. 2m ed. Paris, A. Collin, 1946, 216p.

Some of the graphic peculiarities of " Crucifixtion"

Crucifixion as the most cruel means invented by man has a long history. The criminals were cracified on the cross still by Babylon people,by Persian and Phoenix people. In the first years of Christianity the cross was considered as the symbol of cruelty and barbarity. For a long time in the perception of the Christian, cross was the symbol of suffering and monstrous death. It was difficult for them to accept the cross as a symbol of salvation and beginning of new life, as in daily reality it was the symbol of suffering and death. In the first centuries of the acceptanc of Christianity, the crucifixion of the Saviour was described superficial and reviewed, especially with the help of the figures of The Old Testament. The idol of crucified Jesus was born in the fifth century in the Middle East countries. Here Jesus was depicted naked,only his sinks were linked with a piece of cloth. The church pursued a purpose ,so to represent the scene of crucifixion, so that it would turn into hope and win from mourning, symbolizing the new era of humanity history. No more tortured Jesus was described on the cross, but overtoped the Son of God,the World's Saviour. There are certain kind of crosses but seven-eight sided crosses are more common, we can rarely meet three-sided crosses. On the board that was provided for head was written «ICXC». In parallel we meet this following writing «IXRN» in Byzantine monuments. Thus we can divide the graphic types of crucifixion in three main groups,as European,Byzantine and Eastern ` Armenian.